

Ինչպես են հաշվարկվում IHSS-ի ժամերը

Հոկտեմբեր 2018թ., Հրատ. #5611.10 - Armenian

Այս հրապարակման մեջ բացատրվում է, թե ինչպես են հաշվարկվում Տնային օժանդակող ծառայությունների (անգլ.՝ In-Home Supportive Services, IHSS) ամսական ժամերը:¹ Այս հրապարակման մեջ ենթադրվում է, որ դուք արդեն դիմել եք IHSS-ի համար, անցել եք IHSS-ի սոցիալական աշխատողի կողմից իրականացվող տան գնահատման գործընթացը և ստացել եք ժամերի հաստատման ծանուցումը (անգլ.՝ Notice of Action, NOA): Մանրամասն [IHSS-ին դիմում ներկայացնելու գործընթացի մասին տե՛ս IHSS-ի հիմնական բաղադրիչների մասինթիվ #5470.01 ձեռնարկում:](#)²

A) Ընդհանուր տեղեկատվություն

(1) IHSS-ի ֆինանսավորումը

Նախ և առաջ կարևոր է հասկանալ IHSS-ի տարբեր ֆինանսավորման աղբյուրները, քանի որ ձեզ համար հասանելի IHSS ժամերի ամսական առավելագույն քանակը կորոշվի կախված այն բանից, թե ձեզ որ ֆինանսավորման աղբյուրին (նաև՝ «ծրագիր») կկցեն: Ի նկատի ունեցեք, որ «ձեզ համար հասանելի ժամեր» չի նշանակում, որ դուք

¹ Որքանով որ մեզ հայտնի է, սա այն բանաձևն է, որը նահանգն օգտագործում է IHSS ծառայությունները հաշվարկելու համար: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

² DRC-ի «Տնային օժանդակող ծառայությունների հիմնական բաղադրիչների մասին ձեռնարկ» հրապարակումը կարելի է գտնել այստեղ՝ [DRC-ի Տնային օժանդակող ծառայությունների հիմնական բաղադրիչների մասին ձեռնարկ: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

կատանաք այդ բոլոր ժամերը: Ձեզ հասկացվելիք ժամերի որոշիչ գործոնների մասին կքննարկվի այս հրապարակման մեջ:

Գործում են չորս IHSS ծրագրեր: Յուրաքանչյուր ծրագիր ունի իրավունակության տարբեր չափանիշներ և ամսական հասանելի առավելագույն ժամեր՝ կախված այն բանից, թե արդյոք դուք դիտարկվել եք որպես Լուրջ խնդիր ունեցող կամ Ոչ լուրջ խնդիր ունեցող (մանրամասները ստորև): Այդ ծրագրերն են.

- Անհատական խնամքի ծառայությունների ծրագիր (անգլ.՝ Personal Care Services Program, PCSP),
- IHSS Plus տարբերակ (անգլ.՝ IHSS Plus Option, IPO),
- Տնային օժանդակող մնացորդային ծառայություններ (IHSS-R), և
- Համայնքի առաջնահերթ ընտրության իրավունքով տարբերակ (անգլ.՝ Community First Choice Option, CFCO)

Իմանալու համար, թե որ ծրագրում եք դուք ընդգրկվել, կարող եք տեսնել ձեր IHSS-ի դիմումը հաստատող ծանուցումը³ կամ հարցնել IHSS-ի ձեր սոցիալական աշխատողին:

Ստորև բերված աղյուսակում նշված են ծրագրերը և IHSS-ի ամսական առավելագույն ժամաքանակը.

<div style="border: 1px solid black; width: 20px; height: 20px; display: inline-block; margin-right: 5px;"></div> Ծրագիր	Եթե ձեզ դիտարկել են որպես Լուրջ խնդիր ունեցող (SI), մինչև՝	Եթե ձեզ դիտարկել են որպես Ոչ լուրջ խնդիր ունեցող (NSI), մինչև՝	Տեղեկատվության հղում/աղբյուր
PCSP	283 ժամ/ամիսը	283 ժամ/ամիսը	Բոլոր վարչաշրջանների տեղեկատվական ծանուցում (ACIN) թիվ I-28-06
IPO	283 ժամ/ամիսը	195 ժամ/ամիսը	Բոլոր վարչաշրջաններին ուղղված նամակ (ACL) թիվ

³ Տե՛ս [Տնային օժանդակող ծառայությունների \(IHSS\) փոփոխման մասին ծանուցումը](#) որպես Ծառայությունների հաստատման ծանուցման նմուշ: [\(Վերադարձնալ հիմնական փաստաթղթին\)](#)

			11-19
IHSS-R	283 ժամ/ամիսը	195 ժամ/ամիսը	ACIN I-28-06
CFCO	283 ժամ/ամիսը	Մինչև 283 ժամ/ամիսը	ACL 14-60

- PCSP`

PCSP-ի իրավունակության համար դուք պետք է ստանաք ամբողջական ծավալով Medi-Cal⁴, իսկ ձեր IHSS տրամադրողը չի կարող լինել ձեր ամուսինը/կինը կամ ծնողը:

- IPO`

IPO-ի իրավունակության համար դուք չպետք է համապատասխանեք PCSP ծրագրին հետևյալ պատճառներից մեկով.

- ձեր IHSS տրամադրող(ներ)ն է/են ձեր ամուսինը/կինը կամ ծնողը,
- դուք ստանում եք Advance Pay կանխավճարը,⁵
- կամ դուք ստանում եք Ռեստորանային ճաշի նպաստ:⁶

⁴ Ամբողջական ծավալով Medi-Cal նշանակում է, որ դուք կարող եք օգտվել Medi-Cal-ով առաջարկվող բոլոր ծառայություններից:

[\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵ Advance Pay-ը մի տարբերակ է IHSS շահառուների համար, որով նրանք ստանում են կանխավճար իրենց ամսական ծառայությունների դիմաց ծառայությունները մատուցողներին անմիջապես վճարելու համար: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Կալիֆորնիայի Սոցիալական ապահովության վարչության «Տնային օժանդակող ծառայությունները (IHSS) ծրագրի կանխավճար» հրապարակումը:

Հասանելի է այստեղ` [Տնային օժանդակող ծառայություններ \(IHSS\) ծրագրի կանխավճար: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁶ Ռեստորանային ճաշի նպաստը տրվում է այն IHSS շահառուներին, ովքեր տանը ունեն եփելու համապատասխան հարմարություններ, սակայն իրենց հաշմանդամությունը խանգարում է նրանց օգտվել այդ խոհանոցային հարմարություններից: MPP 30-757.133(a): Ի նկատի ունեցեք, որ եթե ստանում եք Medi-Cal Լրացուցիչ երաշխավորված եկամտի ծրագրով և տանը չունեք եփելու և եփածը պահեստավորելու համապատասխան հարմարություններ, դուք Լրացուցիչ

i. IHSS-R`

IHSS-R-ի իրավունակության համար դուք չեք ստանում ամբողջական ծավալով Medi-Cal կամ չեք ստանում ամբողջական ծավալով Medi-Cal դաշնային ֆինանսավորման մասնակցությամբ:⁷ Դա հիմնականում նշանակում է IHSS-R մշտական օրինական բնակիչների կամ Միացյալ Նահանգներում իբրև թե օրենքով բնակվող անձանց համար:⁸

ii. CFCO` Համայնքի առաջնահերթ ընտրության իրավունքով տարբերակ

CFCO-ի իրավունակության համար դուք պետք է իրավունակ լինեք ամբողջական ծավալով դաշնության ֆինանսական մասնակցությամբ Medi-Cal-ին և համապատասխանեք ինսամքի կենտրոնի մակարդակի ինսամքին:⁹

Երաշխավորված եկամտի ծրագրի միջոցով պետք է ստանաք Ռեստորանային ճաշի նպաստ: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Բոլոր վարչաշրջաններին ուղղված թիվ 16-12 նամակը, որը հասանելի է այստեղ` [Հրապարակում տարածաշրջանային ծրագրի գործառնական ձեռնարկի համակարգի \(POMS\) վերաբերյալ: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁷ Ներգաղթյալների որոշակի խմբի համար Կալիֆորնիան տրամադրում է ամբողջական ծավալով Medi-Cal նահանգային բյուջեի, այլ ոչ դաշնային բյուջեի հաշվին: Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Աղքատության և օրենքի պահպանման արևմտյան կենտրոնի «Բժշկական ապահովագրության ստացում և պահպանում ցածր եկամուտ ունեցող կալիֆորնիացիների համար. Ուղեցույց փաստաբանների համար» վերնագրով ուղեցույցի գլուխ 1-ը, որը հասանելի է այստեղ` [Գլուխ 1. Համընդհանուր իրավունակություն Medi-Cal-ի համար: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁸ Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [IHSS անձնական ինսամքի ծառայությունների ծրագիրը, Անկախ ապրելակերպի և ինսամքի կենտրոնում բնակվելուց հրաժարման ծրագիր և Մնացորդային վճարումների ծրագիր: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁹ Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Բոլոր վարչաշրջաններին ուղղված թիվ 14-60 նամակը, որը հասանելի է այստեղ` [Համայնքի](#)

Եթե դուք IPO ծրագրում եք, սակայն կարող եք լինել նաև CFCO-ում, ապա մտածեք CFCO տեղափոխվելու մասին: CFCO-ն թույլ է տալիս ավելի շատ առավելագույն քանակով ժամեր (որի համար դուք այնուամենայնիվ պետք է ապացուցեք ձեր իրավունակությունը), և հնարավոր է օգտվեք ամուսնական զույգի աղքատացման կանոններից (տե՛ս DRC-ի թիվ 5392.01 հրապարակումը¹⁰ և «Բոլոր վարչաշրջանների սոցիալական ապահովության տնօրեններին ուղղված թիվ 17-25 նամակը»¹¹):

(2) Լուրջ խնդիր՝

IHSS-ն ամսական առավելագույն ժամերի քանակը սահմանում է կախված այն բանից, թե արդյոք դուք դիտարկվել եք որպես Լուրջ խնդիր (SI) ունեցող, թե Ոչ լուրջ խնդիր (NSI) ունեցող: Ըստ IHSS-ի կանոնակարգի ձեր NSI կամ SI լինելը սահմանվում է հետևյալ կատեգորիաների ժամերն ավելացնելով. ճաշի պատրաստում, մաքրություն ճաշից հետո, շնչառական սարքերի միացում, ինամբ հաստադիրքի և միզապարկի դատարկման համար, կերակրում, ամենօրյա լվացումներ անկողնում, օգնություն հագնվելիս, դաշտանային ինամբ, օգնություն շարժվելիս, տեղափոխություններ, լոգանք, բերանի հիգիենա, հարդարում, մաշկի տրորում, դիրքափոխում, օգնություն պրոթեզների հարցում, հարբժշկական ծառայություններ:¹²

[առաջնահերթ ընտրության իրավունքով տարբերակի \(CFCO\) ծրագրի իրականացում: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁰ [Չասանելի է հետևյալ հղումով՝ DRC-ի Medi-Cal ծրագրեր, որոնք կօգնեն ձեզ մնալ ձեր սեփական տանը կամ դուրս գալ տարեցների ու հաշմանդամների ինամբի կենտրոնից: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹¹ [Չասանելի է հետևյալ հղումով՝ Տնային և համայնքահեն ծառայությունների ծրագիր և Չատկացումներ ամուսնու/կնոջ աղքատացման դեպքում: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹² [MPP 30-7-1\(s\)\(1\)\(A\)-\(D\), Զաղաքականությունների և ընթացակարգերի մասին ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝ Սոցիալական ապահովության ծառայությունների չափանիշներ - Գլուխ 30-700, Ծառայությունների ծրագիր թիվ 7. IHSS և Սոցիալական ապահովության ծառայությունների չափանիշներ - Ծառայությունների](#)

Եթե դուք ստանում եք այլընտրանքային ռեսուրսներ¹³, որոնք մատուցում են վերը նշված ծառայություններից ցանկացածը, ապա այդ ժամերը հաշվի են առնվում, երբ որոշվում է, թե արդյոք շահառուն ոչ լուրջ խնդիր ունեցող է, թե լուրջ խնդիր ունեցող է, անգամ եթե այդ նույն ժամերը չեն հաշվվում տվյալ շահառուի IHSS-ի կարիքների համար:¹⁴

Օրինակ՝ եթե դուք հաճախում եք տարեցների ցերեկային խնամքի կենտրոն և ճաշի համար ստանում եք ճաշից հետո մաքրության ծառայություններ, ապա ձեր ամսական IHSS ժամերը չեն ներառի ձեզ անհրաժեշտ օգնությունը ճաշից հետո մաքրության համար: Ըաշից հետո մաքրության օժանդակությունը, որը դուք ստանում եք տարեցների ցերեկային խնամքի կենտրոնում, այնուամենայնիվ կհաշվվի կախված այն բանից, թե արդյոք դուք համարվում եք «Լուրջ խնդիր ունեցող», թե «Ոչ լուրջ խնդիր ունեցող»: Դա նշանակում է, որ ձեր ամսական առավելագույն ժամերի քանակը կարող է լինել 283 կամ 195՝ կախված այն բանից, թե արդյոք ձեզ գնահատել են որպես «Լուրջ խնդիր ունեցող», թե «Ոչ լուրջ խնդիր ունեցող»:

Դուք համարվում եք որպես Լուրջ խնդիր ունեցող, եթե շաբաթական ստանում եք 20 ժամ կամ ավելի վերոնշյալ կատեգորիաներում:¹⁵ Դուք համարվում եք որպես Ոչ լուրջ խնդիր ունեցող, եթե շաբաթական ստանում եք 19 ժամ կամ պակաս վերոնշյալ կատեգորիաներում:

(3) Տնային գնահատում

Սոցիալական աշխատողն անցկացնում է գնահատում ձեր տանը, որպեսզի որոշի, թե ինչ ծառայություններ են ձեզ անհրաժեշտ, և որքան ժամանակ է ձեզ հարկավոր յուրաքանչյուր ծառայության համար: Դրանից հետո, ըստ կիրառելիության, սոցիալական աշխատողը համաչափության սկզբունքով բաշխում է որոշակի ծառայությունների

[ծրագիր թիվ 7. IHSS ծախսային սահմանափակումներ: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹³ Այլընտրանքային ռեսուրսները IHSS-ին նման ծառայություններ են, որոնք դուք ստանում եք այլ ծրագրերի միջոցով: MPP 30-757.171(a)(2) և MPP 30-763.611: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁴ MPP 30-701(s)(1), 30-763.5, 30-761.273: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁵ MPP 30-701(s)(1): [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

ժամաքանակը և կրճատում է այն, եթե առկա են այլընտրանքային ռեսուրսներ: Համաչափության սկզբունքով բաշխման և այլընտրանքային ռեսուրսների մասին մանրամասն քննարկվելու է ստորև: Ի նկատի ունեցեք, որ կախված ձեր իրավիճակից՝ համաչափության սկզբունքով կարող են հատկացվել պաշտպանիչ վերահսկողության ծառայություններ: Մանրամասն տեղեկատվություն համար տե՛ս DRC-ի [թիվ 5612.01](#) հրապարակումը:

(4) Բաշխում համաչափության սկզբունքով

Եթե IHSS ծառայություններն ընդհանուր առմամբ կարող են բավարարվել տանը եղած որևէ մեկի կողմից, ապա այդ ծառայության ժամաքանակի կարիքը պետք է բաշխվի համաչափորեն:¹⁶ Օրինակ, եթե տրամադրվող առնչվող կամ կենցաղային ծառայությունից օգտվում է մի քանի անձ, ապա այդ ծառայությունը պատրաստելու համար պահանջվող ժամանակը բաժանվում է հավասարապես տվյալ ծառայությունից յուրաքանչյուր օգտվողի, այդ թվում՝ տվյալ տնային տնտեսությունում առկա ոչ IHSS շահառուների միջև:

Օրինակ, եթե ծնողից պահանջվում է 100 թոպե ընտանիքի բոլոր հինգ անդամների (ներառյալ ծնողի և ամուրի IHSS շահառուի) ամբողջ շաբաթվա լվացքն անելու համար, ապա IHSS շահառուին հատկացվող ժամանակը կազմում է 20 թոպե ($100 \div 5 = 20$ թոպե):

Համաչափության սկզբունքով բաշխվում են հետևյալ կատեգորիաների ծառայությունները.

- Կենցաղային ծառայություններ և հիմնարար մաքրում,¹⁷
- Առնչվող ծառայություններ,¹⁸ և
- Պաշտպանիչ հսկողություն:¹⁹

¹⁶ MPP 30-763.32: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁷ MPP 30-763.31 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁸ MPP 30-763.32: Առնչվող ծառայություններն են ճաշի պատրաստումը, ճաշից հետո մաքրումը, ամենօրյա լվացքը, սննդամթերքի գնումները և այլ տեսակի գնումներ/գործեր: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁹ Պաշտպանիչ հսկողության ծառայությունների համաչափության սկզբունքով բաշխման մանրամասների համար տե՛ս DRC-ի [թիվ 5612.01](#)

Եթե որևէ ծառայություն միաժամանակ չի մատուցվում մեկ անձից ավելի անձանց, ապա այն չպետք է բաշխվի համաչափորեն:

Օրինակ, եթե վերոնշյալ օրինակում ծնողն իր որդու (ով IHSS շահառու է) լվացքն անում է առանձին հաստադիքի և միզապարկի խնդիրների պատճառով, ապա այդ տնային տնտեսության մյուս անդամները չեն օգտվում տվյալ լվացքի ծառայություններից: Այստեղ որդու լվացքը համաչափորեն չի բաշխվում ընտանիքի մյուս չորս անդամների միջև:

(5) Այլընտրանքային ռեսուրսներ.

Այլընտրանքային ռեսուրսները IHSS-ին նման ծառայություններ են, որոնք դուք ստանում եք այլ ծրագրերի, օրինակ տարեցների ցերեկային խնամքի կենտրոնի կամ դպրոցի միջոցով:²⁰ Ձեր ստացած այլընտրանքային ռեսուրսների ծավալը որոշելուց հետո սոցիալական աշխատողն այդ ժամանակը հանում է ձեր ընդհանուր գնահատված կարիքից:

Օրինակ. Դուք ձեր IHSS ծառայություն մատուցողի հետ ապրում եք նույն տանը: Ծառայություն մատուցողը մաքրում է նախաճաշից և ընթրիքից հետո ձեր երկուսի համար: Դուք այցելում եք տարեցների ցերեկային խնամքի կենտրոն, որտեղ ձեզ օգնում են մաքրել ձեր ճաշից հետո: Ծաշից հետո մաքրություն կատարողիսյում կա «Ծառայություններ, որոնցից դուք հրաժարվել եք կամ ստանում եք ուրիշներից» անվանումով սյունակ: Այստեղ սոցիալական աշխատողը նախ կգումարի նախաճաշից, ճաշից և ընթրիքից հետո մաքրության վրա ծախսված ընդհանուր ժամաքանակը: Այնուհետև, սոցիալական աշխատողը կկատարի ճշգրտում կամ բաշխում համաչափության սկզբունքով, քանի որ ձեր ծառայություն մատուցողի կողմից կատարված մաքրության ծառայություններից օգտվում եք և՛ դուք, և՛ ձեր ծառայություն

[համապատասխան հրապարակումը: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²⁰ MPP 30-757.171(a)(2), MPP 30-763.611: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

մատուցողը: Դա նշանակում է, որ սոցիալական աշխատողը ձեզ համար համաչափորեն բաշխված ժամանակը կհատկացնի ձեզ «Ձեզ անհրաժեշտ ծառայությունների քանակ» սյունակում: Այնուհետև, սոցիալական աշխատողը կնշի այլընտրանքային ռեսուրսից ձեր ստացած մաքրության օժանդակությունը. Այս տեղեկությունը կգրանցվի «Ծառայություններ, որոնցից դուք հրաժարվել եք կամ ստանում եք ուրիշներից» սյունակում:

B) ՔԱՅԼԵՐ.

Քայլ 1 Որոշել ծրագիրը և խնդրի լրջությունը.

Որոշել ֆինանսավորման ծրագրի տեսակը, որում դուք ընդգրկված եք, որը կարող եք գտնել IHSS ծառայությունների հատկացումը հաստատող ձեր ստացած սկզբնական ծանուցման երկրորդ էջում:

Որոշել խնդրի լրջությունը՝ ավելացնելով ծառայությունների ժամաքանակը համապատասխան կատեգորիայում, ինչպես նշվեց վերևում:

Քայլ 2 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության համար IHSS-ի կարիքի շաբաթական չափը.

Գումարեք ձեր ստացած բոլոր IHSS ժամերը, բացի պաշտպանիչ հսկողության ժամերից:

Քայլ 3 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության կարիքի շաբաթական չափը.

Որոշելու համար, թե արդյոք դուք համապատասխանում եք պաշտպանիչ հսկողություն ստանալու համար, թե ոչ, խնդրում ենք նայել DRC-ի [թիվ 5493.01 հրապարակումը](#):²¹ Եթե պաշտպանիչ հսկողությունը բաշխված է համաչափության սկզբունքով, հատկացված ժամերը կներառվեն «ծառայություններ, որոնցից դուք հրաժարվել եք կամ ստանում եք ուրիշներից» սյունակում:

²¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ [DRC-ի Պաշտպանիչ հսկողությունը Տնային օժանդակող ծառայությունների շրջանակում: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Պաշտպանիչ հսկողության ծառայությունների համաչափ բաշխման մասին մանրամասն տե՛ս DRC-ի [թիվ 5612.01 հրապարակման](#) մեջ:

Քայլ 4 Գտնել IHSS-ի, ներառյալ պաշտպանիչ հսկողության, կարիքի ընդհանուր շաբաթական չափաքանակը, այնուհետև հաշվել ամսական քանակը.

Սոցիալական աշխատողը ձեր ծանուցման մեջ նշված շաբաթական IHSS ժամերը գումարում է պաշտպանիչ հսկողության ծառայության շաբաթական ժամերին:²² Ամսական ընդհանուր ժամերը հաշվելու համար նրանք այդ շաբաթական ընդհանուր ժամաքանակը բազմապատկում են 4.33-ով:

Քայլ 5 Համեմատել Քայլ 4-ի արդյունքը ամսական առավելագույն ժամաքանակի հետ.

Սոցիալական աշխատողը համեմատում է Քայլ 4-ի արդյունքը ձեր ծրագրով թույլատրելի առավելագույն ժամերի հետ: Սոցիալական աշխատողը պետք է ընտրի ամենացածր թիվը:

Օրինակ նայեք Էջ 2-ի աղյուսակին, եթե դուք համարվում եք ոչ լուրջ խնդիր ունեցող, ֆինանսավորվում եք IPO ծրագրից, և ձեզ թույլատրվում է ստանալ պաշտպանիչ հսկողություն, այդ դեպքում ձեզ թույլատրվում է ստանալ ամսական ընդամենը 195 ժամ: Դա նշանակում է, որ եթե անգամ ձեր ամսական ընդհանուր ժամաքանակը կազմում է ամսական 195 ժամից ավել, ապա պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների ձեր ամսական ժամերը կսահմանափակվեն 195 ժամով: Եթե ձեր ամսական ընդհանուր ժամաքանակը կազմում է

²² Քանի որ հաշվարկները կատարվում են տասնորդական միավորներով, ձեզ հնարավոր է անհրաժեշտ լինի թույլատրելի տասնորդական միավորների՝ թույլատրելի քանակը բաժանելով 60-ի: Այնուհետև գումարեք ժամերի քանակը՝ որոշելու ընդհանուր ժամերն ու թույլատրելի տասնորդական ձևաչափով: Օրինակ՝ 32 ժամ 10 թույլատրելի: Թույլատրելի համար տասնորդական միավորը կազմում է՝ $10 \div 60 = .1666$: Այնուհետև ստացված թիվը գումարեք ժամերին: $32 + 0.16 = 32.16$ ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

ամսական 195 ժամից պակաս, ապա ձեզ կտրամադրվի այդ ավելի ցածր ժամաքանակը: Այս դեպքում, քանի որ ձեզ անհրաժեշտ են ավելի շատ IHSS ժամեր, քան առավելագույն թույլատրված IHSS ժամերն են, ապա ձեր ծառայությունների հաստատման ծանուցման մեջ պետք է գրանցվի չբավարարված կարիքի չափը:²³ Դեպքի նկարագրության մեջ պետք է արտացոլվի նաև չբավարարված կարիքը: IHSS սոցիալական աշխատողը պետք է ուղղորդի ձեզ դեպի պետական ոչ ծախսային ծրագրերը կամ համայնքահեն ռեսուրսները, որոնք կարող են ունենալ հնարավորություն ապահովելու չբավարարված կարիքը: Այդ ուղղորդումները պետք է գրանցվեն ձեր գործի փաստաթղթերում:

Շ) ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

Օրինակ Ա

Քրամերը 85 տարեկան տարեց տղամարդ է, ով ունի պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների կարիք: Նա ապրում է տանը իր որդու և որդու կնոջ հետ: Նրա որդին հանդիսանում է նրա IHSS ծառայություն մատուցողը: Տանը ուրիշ ոչ ոք չի ստանում պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայություններ: Քանի որ նա մշտական օրինական բնակիչ է, նա ունի IHSS-R-ով ֆինանսավորվող IHSS:

Քայլ 1 Որոշել ծրագիրը և խնդրի լուծումները.

Քրամերին ֆինանսավորումը հատկացվում է IHSS-R ծրագրի միջոցով: Նրա ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ժամերի համապատասխան կատեգորիաները գումարելիս՝ բացահայտվել է, որ նա ոչ լուրջ խնդիր ունեցող է, քանի որ կիրառելի կատեգորիաներում ստանում է 20 ժամից պակաս:

Քայլ 2 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության համար IHSS-ի կարիքի շաբաթական չափը.

Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո շաբաթական նա ունենում է 15 ժամ:

²³ Բոլոր վարչաշրջաններին ուղղված նամակ թիվ 13-66: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Քայլ 3 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության կարիքի շաբաթական չափը.

Օգտվելով DRC-ի [թիվ 5612.01 հրապարակումից](#)՝ մենք որոշում ենք, որ Քրամերն ունի շաբաթական 143 ժամ պաշտպանիչ հսկողության համար:

Քայլ 4 Գտնել IHSS-ի, ներառյալ պաշտպանիչ հսկողության, կարիքի ընդհանուր շաբաթական չափաքանակը, այնուհետև հաշվել ամսական քանակը.

$$15 + 143 = 158 \text{ ժամ շաբաթական}$$

$$158 \times 4.33 = 684.14 \text{ ժամ ամսական}$$

Քայլ 5 Համեմատել Քայլ 4-ի արդյունքը ամսական առավելագույն ժամաքանակի հետ.

Էջ 2-ում նշված աղյուսակին համապատասխան՝ ոչ լուրջ խնդրի մակարդակով IHSS-R-ի դեպքում, Քրամերը ամսական առավելագույնը կարող է ստանալ 195 ժամ:

Քայլ 4-ի ամսական 684.14 ժամ արդյունքն ավելի մեծ է, քան նրա կանոնավոր ամսական առավելագույն 195 ժամը: Հետևաբար, Քրամերն ամսական առավելագույնը կարող է ստանալ 195 ժամ: Նրա ժամերի հաստատման ծանուցման մեջ պետք է գրանցվի չբավարարված կարիքի մասին: IHSS-ի սոցիալական աշխատողը Քրամերին պետք է ուղղորդի դեպի պետական ոչ ծախսային ծրագրերը կամ համայնքահեն ռեսուրսները, որոնք կարող են ունենալ հնարավորություն տրամադրելու նրան այն ծառայությունները, որոնք կբավարարեն չբավարարված կարիքը:

Օրինակ Բ.

Մեկ տնային տնտեսությունում կա չորս երեխա: Երեխաների անուններն են Էնդրյու, Բարբարա, Կառլոս և Դանթե: Յուրաքանչյուր երեխայի թույլատրվում է ստանալ պաշտպանիչ հսկողություն: Էնդրյուն և Բարբարան հաճախում են դպրոց օրական 7.5 ժամ կամ շաբաթական 37.5 ժամ: Կառլոսը և Դանթեն դասերն ստանում են տանը: Ե՛վ մայրը, և՛ հայրը համարվում են IHSS ծառայություններ մատուցող: Երեխաների

լուրջ կարիքների պատճառով հայրը կարող է միաժամանակ ապահովել միայն պաշտպանիչ հսկողություն Էնդրյուի և Բարբարայի համար: Մայրը միաժամանակ կարող է ապահովել պաշտպանիչ հսկողություն միայն Կառլոսի և Դանթեի համար:

Քայլ 1. Որոշել ծրագիրը և խնդրի լրջությունը.

Ալեքսանդր. Ալեքսանդրն ստանում է IHSS ծառայություններ CFCO ծրագրով: Այս տեղեկատվությունը վերցվել է IHSS ծառայությունների համար նրա դիմումի հաստատման ծանուցումից: Կարմիր աստղանիշով նշված կատեգորիաները գումարելիս՝ մենք բացահայտում ենք, որ Ալեքսանդրը հանդիսանում է ոչ լուրջ խնդիր ունեցող, քանի որ խնդրի լրջությունը որոշող կիրառելի կատեգորիաներով նա ստանում է շաբաթական 20 ժամից պակաս: Նա ստանում է 19.85 ժամ կիրառելի կատեգորիայի համար:²⁴

Բարբարա. Բարբարան նույնպես ստանում է IHSS ծառայություններ CFCO ծրագրով: Նա համարվում է լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում շաբաթական ստանում է 20 ժամ կամ ավելի:

Կառլոս. Կառլոսն ստանում է IHSS ծառայություններ CFCO ծրագրով: Նա համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում շաբաթական ստանում է 20 ժամից պակաս:

Դանթե. Դանթեն ստանում է IHSS ծառայություններ CFCO ծրագրով: Նա համարվում է լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում շաբաթական ստանում է 20 ժամ կամ ավելի:

Քայլ 2. Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության համար IHSS-ի կարիքի շաբաթական չափը.

²⁴ Նմանատիպ իրավիճակներում շարունակեք ուսումնասիրել փաստերը՝ տեսնելու, թե արդյոք նա կարող է ստանալ շաբաթական 20 ժամ կամ ավելի կատեգորիաներից որևէ մեկով, որպեսզի համարվի «լուրջ խնդիր ունեցող»: [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Ալեքսանդր. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո նա ունենում է IHSS-ի շաբաթական 24.85 ժամ:

Բարբարա. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Բարբարային թույլատրվում է ստանալ IHSS-ի շաբաթական 25 ժամ:

Կառլոս. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Կառլոսին թույլատրվում է ստանալ IHSS-ի շաբաթական 5 ժամ:

Դանթե. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Դանթեին թույլատրվում է ստանալ IHSS-ի շաբաթական 21 ժամ:

Քալյ 3. Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության կարիքի շաբաթական չափը.

Ալեքսանդր. 46.5 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար

Բարբարա. 46.5 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար

Կառլոս. 84 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար

Դանթե. 84 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար

Քալյ 4. Գտնել IHSS-ի, ներառյալ պաշտպանիչ հսկողության, կարիքի ընդհանուր շաբաթական չափաքանակը, այնուհետև հաշվել ամսական քանակը.

Ալեքսանդր. Ձեր ծանուցման մեջ նշված շաբաթական IHSS ժամաքանակը՝ 24.85, գումարել պաշտպանիչ հսկողության ծառայության շաբաթական ժամերին՝ 46.5: Ժամաքանակի գումարը կազմում է 71.35 ժամ շաբաթական: Այնուհետև բազմապատկել 71.35×4.33 ՝ ամսական ժամաքանակը գտնելու

համար: Ընդհանուր ժամաքանակը կազմում է 308.9 ժամ ամսական:

Բարբարա.

$$25 + 46.5 = 71.5 \text{ ժամ շաբաթական}$$
$$71.5 \times 4.33 = 309.5 \text{ ժամ ամսական}$$

Կառլոս.

$$5 + 84 = 89 \text{ ժամ շաբաթական}$$
$$89 \times 4.33 = 385.3 \text{ ժամ ամսական}$$

Դանթե.

$$21 + 84 = 105 \text{ ժամ շաբաթական}$$
$$105 \times 4.33 = 454.6 \text{ ժամ ամսական}$$

Քայլ 5. Համեմատել Քայլ 4-ի արդյունքը ամսական առավելագույն ժամաքանակի հետ.

Ալեքսանդր. Քանի որ Ալեքսանդրը համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, սակայն ստանում է CFCO-ի միջոցով ֆինանսավորվող IHSS, նա իրավունակ է ստանալու ամսական մինչև 283 ժամ IHSS ծառայություններ: Քանի որ նրա ներկայիս ամսական ընդհանուր ժամաքանակը կազմում է 308.9 ժամ, նրան թույլատրվում է ունենալ ամսական 283 ժամից պակաս IHSS ժամեր պաշտպանիչ հսկողությամբ:

Բարբարա. Քանի որ Բարբարան համարվում է լուրջ խնդիր ունեցող և ստանում է CFCO-ի միջոցով ֆինանսավորվող IHSS, նա իրավունակ է ստանալու ամսական մինչև 283 ժամ IHSS ծառայություններ: Քայլ 4-ի արդյունքն է՝ 309.5 ժամ ամսական: Երկուսից ամենաքիչը ամսական 283 ժամն է, այսինքն Բարբարային թույլատրվում է ամսական ստանալ 283 ժամ:

Կառլոս. Քանի որ Կառլոսը համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, սակայն ստանում է CFCO-ի միջոցով ֆինանսավորվող IHSS, նա իրավունակ է ստանալու ամսական մինչև 283 ժամ IHSS ծառայություններ: Քանի որ նրա ներկայիս ամսական ընդհանուր ժամաքանակը կազմում է 385.3 ժամ, նրան թույլատրվում է ունենալ պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների ամսական կանոնավոր 283 ժամը:

Դանթե. Քանի որ Դանթեն համարվում է լուրջ խնդիր ունեցող, սակայն ստանում է CFCO-ի միջոցով ֆինանսավորվող IHSS, նա իրավունակ է ստանալու ամսական մինչև 283 ժամ IHSS ծառայություններ: Քանի որ նրա ներկայիս ամսական ընդհանուր ժամաքանակը կազմում է 454.6 ժամ, նրան թույլատրվում է ունենալ պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների ամսական կանոնավոր 283 ժամը:

Օրինակ Գ

Յյուլին, նրա կրտսեր քույր Իզաբելլան և նրա կրտսեր եղբայր Ջասպերն ստանում են պաշտպանիչ հսկողություն: Նրանք ապրում են իրենց հոր հետ: Յյուլին, Իզաբելլան և Ջասպերն ունեն այնպիսի մեծ կարիքներ, որ նրանց հայրը կարող է միաժամանակ հոգ տանել միայն Յյուլիի և Իզաբելլայի մասին: Հայրը վարձում է IHSS ծառայություն մատուցող Ջասպերին խնամելու համար: Յյուլին և Իզաբելլան երկուսով ստանում են պաշտպանիչ հսկողություն (կամ երկուսով ունեն պաշտպանիչ հսկողության կարիք), քանի որ նրանց հայրը կարող է պաշտպանիչ հսկողություն ապահովել նրանց համար միաժամանակ: Յյուլին և Ջասպերը հաճախում են դպրոց օրական վեց ժամ կամ շաբաթական 30 ժամ: Իզաբելլան դասերն ստանում է տանը, սակայն այդ ընթացքում Իզաբելլայի հայրը պետք է հետևի նրան:

Քալ 1 Որոշել ծրագիրը և խնդրի լուծությունը.

Յյուլի. Յյուլին ընդգրկված է IPO ծրագրում և համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում նա շաբաթական ստանում է 20 ժամից պակաս:

Իզաբելլա. Իզաբելլան նույնպես ընդգրկված է IPO ծրագրում և համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում նա շաբաթական ստանում է 20 ժամից պակաս:

Ջասպեր. Ջասպերը համարվում է լուրջ խնդիր ունեցող, քանի որ կիրառելի կատեգորիաներում ստանում է 20 ժամ կամ ավելի:

Քալ 2 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության համար IHSS-ի կարիքի շաբաթական չափը.

Հյուլի. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Հյուլին ունենում է ոչ պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների շաբաթական 12 ժամ:

Իգաբելլա. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Իգաբելլան ունենում է ոչ պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների շաբաթական 15 ժամ:

Ջասպեր. Իր ժամերի հաստատման ծանուցման մեջ նշված ոչ պաշտպանիչ հսկողությամբ ծառայությունների բոլոր ժամերը գումարելուց հետո Ջասպերն ունենում է ոչ պաշտպանիչ հսկողությամբ IHSS ծառայությունների շաբաթական 20 ժամ:

Քալ 3 Որոշել ոչ պաշտպանիչ հսկողության կարիքի շաբաթական չափը.

Հյուլի. 54 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար
Իգաբելլա. 84 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար
Ջասպեր. 138 ժամ շաբաթական պաշտպանիչ հսկողության համար

Քալ 4 Գտնել IHSS-ի, ներառյալ պաշտպանիչ հսկողության, կարիքի ընդհանուր շաբաթական չափաբանակը, այնուհետև հաշվել ամսական քանակը.

Հյուլի.
 $12 + 54 = 66$ ընդհանուր IHSS ժամ շաբաթական,
 $66 \times 4.33 = 285.78$ ընդհանուր IHSS ժամ ամսական

Իզաբեյլա.

15 + 85 = 100 ընդհանուր IHSS ժամ շաբաթական,
100 x 4.33 = 433 ընդհանուր IHSS ժամ ամսական

Ջասպեր.

20 + 138 = 158 ընդհանուր IHSS ժամ շաբաթական,
684.14 ընդհանուր IHSS ժամ ամսական

Քայլ 5 Համեմատել Քայլ 4-ի արդյունքը ամսական առավելագույն ժամաքանակի հետ.

Հյուլի. Քանի որ Հյուլին համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, IPO ծրագրով ֆինանսավորվող IHSS շահառու, նրա ամսական առավելագույն ժամաքանակը կազմում է 195 ժամ ամսական: Քանի որ Քայլ 4-ի արդյունքն ավելի մեծ է, քան ամսական առավելագույն ժամաքանակը, Հյուլիի թույլատրելի ժամաքանակը սահմանափակվում է ամսական 195 ժամով:

Իզաբեյլա. Քանի որ Իզաբեյլան համարվում է ոչ լուրջ խնդիր ունեցող, IPO ծրագրով ֆինանսավորվող IHSS շահառու, նրա ամսական առավելագույն ժամաքանակը կազմում է 195 ժամ ամսական: Քանի որ Քայլ 4-ի արդյունքն ավելի մեծ է, քան ամսական առավելագույն ժամաքանակը, նրա թույլատրելի ժամաքանակը սահմանափակվում է ամսական 195 ժամով:

Ջասպեր. Քանի որ Ջասպերը համարվում է լուրջ խնդիր ունեցող, IPO ծրագրով ֆինանսավորվող IHSS շահառու, նրա ամսական առավելագույն ժամաքանակը կազմում է 283 ժամ ամսական: Քանի որ Քայլ 4-ի արդյունքն ավելի մեծ է, քան ամսական առավելագույն ժամաքանակը, նրա թույլատրելի ժամաքանակը սահմանափակվում է ամսական 283 ժամով:

Լշում. Հայրը պետք է ուշադիր լինի, որ չխախտի IHSS-ի ժամերի գերազանցման կանոնը: Տե՛ս DRC-ի թիվ 5603.01 հրապարակումը:²⁵

²⁵ Հասանելի է հետևյալ հղումով՝ [Նոր կանոններ IHSS-ի համար՝ ժամերի գերազանցում և առնչվող վճարներ: \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Մենք ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս հետևյալ հղումով՝

[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html)